ՀՏԴ 910.2

Զբոսաշրջություն

Հասմիկ ՍԱՅԱԴՅԱՆ
ԵՊՀ Սերվիսի ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.
E-mail: sayadyan.asmik@mail.ru

ՀՀ - ՈՒՄ ԲՈՒԺԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը մեծ ներուժ և հարուստ բնական ռեսուրսներ ունի՝ բուժավերականգնողական զբոսաշրջության զարգացման և այդ ասպարեզում միջազգային շուկա դուրս գալու համար : Հոդվածում քննվել են բուժավերականգնողական զբոսաշրջության զարգացման հայեցակարգի հիմնական դրույթները, ինչպես նաև ՀՀ-ում դրանց իրականացման միջոցառումները: Վեր են հանվել բուժավերականգնողական տուրերի կազմակերպման, առկա և նոր շուկաներում նոր տուրերի ներդրման առանձնահատկու-թյունները: Գնահատվել են առկա շուկաներում նորույթների ի հայտ գալու հետ կապված ռիսկերը:

Բանալի բառեր՝ առողջարանային զբոսաշրջություն, զբոսաշրջային արտադրանք, բուժավերականգնողկան տուրեր, նորարարական մոտեցումներ, ռիսկերի գնահատում

А. Саядян

ОСОБЕННОСТИ ОРГАНИЗАЦИИ ЛЕЧЕБНО - ОЗДОРОВИТЕЛЬНОГО ТУРИЗМА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Республика Армения обладает большим потенциалом и богатыми природными ресурсами для развития лечебно - оздоровительного туризма и выхода на международный рынок. В статье рассмотрены основные положения концепции развития лечебно - оздоровительного туризма, а также мероприятия по их осуществлению в Армении. В статье рассмотрены особенности организации лечебно - оздоровительных туров, внедрения новых туров на существующих и на новых рынках. Также оцениваются риски, связанные с выходом на существующий рынок нововведений и на международный рынок уже существующих турпакетов.

Ключевые слова: оздоровительный туризм, туристский продукт, лечебно- оздоровительные туры, инновационные подходы, оценка рисков

H.Sayadyan

FEATURES OF THE ORGANIZATION OF MEDICAL AND HEALTH TOURISM IN THE REPUBLIC OF ARMENIA

The Republic of Armenia has great potential and rich natural resources for the development of health tourism and entering the international market. The article discusses the main provisions of the concept of the development of medical and health tourism, as well as measures for their implementation in Armenia. The article discusses the features of the organization of medical and health tours, the introduction of new tours in existing and new markets. The risks associated with entering the existing market of innovations and the international market for existing tour packages are also assessed.

Key words: health tourism, tourist product, health-improving tours, innovative approaches, risk assessment.

Հայաստանի առողջարանային զբոսաշրջությունը հիմնված է առողջարանային մի շարք կենտրոնների վրա, որոնք տեղաբաշխված են հանրապետության տարբեր տարածքներում: Առողջարանային տարածքներն ունեն բուժիչ բնական և կլիմայական ռեսուրսներ, այդ թվում' խմելու և ջերմային հանքային աղբյուրներ, բուժական ցեխ, տորֆ, լեռնային և սոճու անտառներ, մեղմ կլիմա:

Հայաստանը ունի մեծ ներուժ վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար: Զբոսաշրջիկների շրջանում առավել հայտնի հանգստավայրերն են՝ Արզնին, Դիլիջանը, Հանքավան-Մարմարիկը, Բջնի-Արզական-Աղվերանը, Ծաղկաձորը, Ստեփանավան-Գուլագարակը, Սյունիքը, Լոռին, Սևանը, Ջերմուկը: Այս զբոսաշրջային կենտրոնները առաջարկում են կացարան և տարատեսակ ծառայություններ, որոնք թույլ են տալիս զբոսաշրջիկներին բավարարել իրենց պահանջմունքները, բարելավել առողջությունը: Բուժավերականգնողական զբոսաշրջության հիմնական շարժիչը ներքին շուկան է և այցելուները Ռուսաստանից՝ որպես հիմնական միջազգային շուկայից:

Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ինդուստրիան իր բնական և կլիմայական ռեսուրսներով և ենթակառուցվածքներով կարող է մրցունակ լինել աշխարհում հայտնի կենտրոնների հետ, ինչպիսիք են՝ Կառլովի Վարին, Ժելեզնովոդսկը, Պյատիգորսկը, Վիշին և այլն:

Բուժա-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար դիտարկենք հետևյալ հայեցակարգը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Բուժավերականգնողական զբոսաշրջության զարգացման հայեցակարգ [1]

Հայեցակարգի գործադրումը կնպաստի կուրորտային ենթակառուցվածքի զարգացմանը, առողջարանային ծառայությունների որակի և կուրորտային համալիրի մրցունակության բարձրացմանը: Հայեցակարգի հիմնական դրույթների իրականացման համար պետք է մշակել առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման մարքեթինգային ծրագիր՝ նշելով անհրաժեշտ միջոցառումները, դրանց իրականացման ժամկետները, ակնկալվող արդյունքները, ֆինանսավորման աղբյուրներն ու ծավալները: Համապատասխան ծառայությունները պատշաճ կազմակերպելու արդյունքում Հայաստանն ունի բոլոր հնարավորությունները դառնալու հայտնի զբոսաշրջային կենտրոններից մեկը, իր պատմամշակութային, առողջարանային և այլ ռեսուրսների օգտագործման շնորհիվ:

ՀՀ-ում բուժավերականգնողական զբոսաշրջության զարգացման համար

անհրաժեշտ է իրականացնել մի շարք հիմնական միջոցառումներ (տե՛ս աղյուսակ 1)։

Աղյուսակ 1.

Հայեցակարգից բխող անհրաժեշտ միջոցառումներ

Միջոցառումներ	Միջոցառումների նկարագիրը
ՀՀ կուրորտային զբոսաշրջության արդյունքի ներկայացում միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում	1. մասնակցել միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին՝ ներկայացնելով կուրորտային արդյունքը 2. ձևավորել և իրականացնել գովազդային ծրագրեր 3. կիրառել և զարգացնել էլեկտրոնային գովազդը
Բուժավերականգնողական զբոսաշրջության վիճակագրական հաշվառման գործընթացի և օրենսդրական դաշտի բարելավում	1. քայլեր ձեռնարկել ոլորտի վիճակագրական հաշվառման բարելավման ուղղությամբ 2. ձևավորել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտ 3. մշակել ոլորտի զարգացման ծրագրեր 4. մշակել առանձին կուրորտային գոտիների զարգացման ծրագրեր
Առողջարանային հանգստի ծառայությունների գնի և որակի ցուցանիշների բարելավում	1. բարձրացնել առողջարանային ծառայությունների որակը, սպասարկման մակարդակը 2. քայլեր ձեռնարկել առողջարանային հանգստի գների նվազեցման ուղղությամբ 3. կիրառել առողջարանային երկարատև հանգիստը խթանող գնային զեղչերի քաղաքականություն
Գործարար, ներդրումային միջավայրի բարելավում	1. նպաստել ներդրումների ներգրավմանը՝ հին առողջարանները վերանորոգելու, նոր առողջարաններ կառուցելու և ենթակառուցվածքների զարգացման նպատակով, 2. ստեղծել զբոսաշրջությունից ստացված եկամուտներից

	զբոսաշրջավայրերի զարգացմանը տրամադրվող հատկացումների մեխանիզմ
Ոլորտի զարգացման գիտականության ապահովում	1. պատրաստել ոլորտի զարգացմանն անհրաժեշտ գիտական կադրեր 2. բարձրացնել ոլորտի աշխատողների գիտական մակարդակը, կազմակերպել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ

Բուժավերականգնողական զբոսաշրջությունը պահանջում է համալիր մոտեցում, որը ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ առողջապահական ոլորտում իրականացվող մասնավոր և պետական ներդրումները, միջազգային չափորոշիչներին համապատասխան գործունեությունը՝ միտված որակի մակարդակի բարձրացմանն ու թափանցիկության պահպանմանը, բուժական ծառայությունների մատչելիությանը, բուժանձնակազմի պատշաճ վերաբերմունքին, զարգացած զբոսաշրջային ենթակառուցվածքներին, քաղաքական և սոցիալական կայունությանը, առողջապահության բնագավառում նորույթներին, գյուտերի առկայությանը և դեպի զբոսաշրջիկը կողմնորոշված բժշկական անձնակազմին [2] :

Բուժավերականգնողական զբոսաշրջության շնորհիվ անձը, ընտրելով այլ երկիր, ստանում է և՛ որակյալ բժշկական ծառայություններ, և՛ շրջագայության հնարավորություն:

Առողջապահական զբոսաշրջության շրջանակներում ճանապարհորդությունը կարող է ունենալ տարբեր նպատակներ.

• հանգստ այն դեպքում, երբ կլիմայական և շրջակա միջավայրի հատուկ պայմանները դրականորեն են ազդում առողջության վրա,

• ունենալ բուժական բաղադրիչ՝ որպես լրացուցիչ ծառայություն,

• բուժում՝ որպես հիմնական զբոսաշրջային նպատակակետ, որը ընդգրկում է, օրինակ, հանգիստը մասնագիտացված առողջարաններում:

ՀՀ-ում առողջության բարելավմանը ուղղված բազմաթիվ տուրեր են ձևավորվել, որոնց հիմքում ընկած է սպառողների պահանջմունքների բավարարումը, այս դեպքում՝ հանգստի և առողջության բարելավման համադրման միջոցով: Համապատասխանաբար, նման զբոսաշրջային արտադրանքի մարքեթինգ - «միքսը» պետք է հնարավորինս բավարարի հաճախորդների կարիքները:

Բժշկական և հանգստի ծրագրերը կազմվում են հաշվի առնելով այն հանգամանքը, որ տուրի հիմքում պետք է լինի բուժումը, իսկ հանգիստը և կանխարգելիչ միջոցառումները որպես հավելյալ ծառայություններ: Առողջության բարելավման շրջայցերը չպետք է ներառեն տարատեսակ էքսկուրսիոն ծրագրեր, ակտիվ և ծայրահեղ սպորտային իրադարձություններ: Կարևոր է նաև հաշվի առնել, որ այդպիսի շրջագայությունների համատեղումը գործնականի հետ անընդունելի է, դրանք ռիթմով հակառակն են և բացասաբար են ազդում միմյանց որակի վրա [4] :

Բացի այդ, առողջարանային տարածքներում առաջարկվում է ձևավորել զբոսաշրջային համալիրներ, որոնց շրջանակներում տրամադրվում են բժշկական-վերականգնողական ծառայություններ, ինչպես նաև այն զբոսաշրջիկների համար ժամանցի ակտիվ հնարավորություններ, ովքեր բուժման կարիք չունեն:

Զբոսաշրջային ծրագրերը կարող են ներառել նաև բուժական տարրեր. սա կարող է լինել այցելություն ջրի և ցեխի բաղնիքներ, մերսման և ֆիզիոթերապիայի վարժություններ, էլեկտրական թերապիա, ինհալացիա և այլն: Ժամանցային ծրագրեր մշակելիս պետք է հաշվի առնել սպառողի տարիքը, հիվանդությունները և հակացուցումները:

Բուժավերականգնողական շրջայցեր կազմակերպելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել զբոսաշրջիկների տարածքային տեղաբաշխմանը: Կարևոր է, որ կացարանները տեղակայված լինեն էկոլոգիապես մաքուր, կանաչ և հանգիստ տարածքում, գերադասելի է՝ ջրային օբյեկտների մոտ:

Բուժավերականգնողական տուրի կարևոր տարրն է գինը: Զբոսաշրջային արտադրանքի արժեքը պետք է նպաստի զբոսաշրջային շուկայում դրա առաջխաղացմանը, մրցունակությանն ու շահույթ ստանալուն: Գնագոյացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել միջնորդական գործունեությունը, ծառայությունների խթանման ու կազմակերպման գործոնը. ենթակառուցվածքների, գույքի և սարքավորումների վերազինման, շահագործման և պահպանման, ինչպես նաև անվտանգության և զբոսաշրջության ոլորտի աշխատողների ծախսերը:

Բուժավերականգնողական զբոսաշրջությունը մշտապես նորարարությունների կարիք ունի, և այս առումով կարելի է առանձնացնել նոր տուրարտադրանքի հետևյալ հիմնական մակարդակները [3] .

- Նոր մոդել- երբ տուրարտադրանքը կատարելագործվում է և օժտվում նոր հատկություններով, սակայն նախատեսվում է առկա շուկայի համար, առաջարկվում է սպառողների նույն խմբին և նույն նպատակներով,
- Նորույթ- երբ մշակվում է նոր տուրարտադրանք, որը դուրս է բերվում նոր շուկա, որտեղ նմանատիպ ապրանքների առաջարկով գործում են այլ երկրներ,

- Սկզբունքորեն նոր տուրարտադրանք, այսինքն շուկա է դուրս բերվում այնպիսի նորույթ, որը սկզբունքորեն նոր և աննախադեպ է: Սկզբնական շրջանում դրա ստեղծողը շուկայում գրավում է մենաշնորհային դիրք, մինչև մրցակիցները հանդես չեն գալիս իրենց պատասխան առաջարկներով:

Նոր տուրարտադրանքի շուկա դուրս բերումը կապված է բազմաթիվ ռիսկերի հետ, որոնք կարող են լինել տարբեր բնույթի՝ տեխնոլոգիական, առևտրային, շուկայական, քաղաքական, է կոլոգիական և այլն: Ուստի, նախքան ապրանքը շուկա դուրս բերելը անհրաժեշտ են վերլուծություններ, խորհրդակցություններ, համեմատություններ, ֆինանսական հաշվարկներ, այլ շուկաների ուսումնասիրություններ և այլն:

Ըստ հետազոտությունների, որոնք անցկացվել են ամերիկյան շուկաներում, պարզվել է, որ շուկա դուրս բերվող նոր ապրանքների 70%-ը ձախողվում է:

Դրանց պատճառները ևս տարբեր են [6] .

- Չնախատեսված ծախսեր- երբ նորույթի մշակման ծախսերը ստացվում են ավելի բարձր, քան հաշվարկված էր նախապես,
- Գերագնահատված շուկայի տարողությունը - երբ կատարվում են հավելյալ ծախսեր, որոնք սակայն չեն վերադարձվում,
- Երբ մրցակիցները շուկա են դուրս բերում առավել հաջող տուրարտադրանք, վարում են ցածր գնային քաղաքականություն, վերը նշված հարցերում ավելի հետևողական են լինում:

Նորարարական գործունեության հետ կապված գործոնները բերված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Նորարարական գործունեության հետ կապված գործոնները [5]

Նորարարության գործունեության հետ կապված գործոնները	Նոր գյուտ	Նորարության բարձր մակարդակ	Նորարության միջին մակարդակ	Նորարության ոչ բարձր մակարդակ
1. Ռիսկեր	Ծայրահեղ բարձր	Բարձր են	Չափավոր են	Հարաբերական ցածր
2.Փորձագիտական գնահատական	Շատ դժվար	Դժվար	Բավականին դժվար	Դյուրին
3. Պոտենցիալ շահույթ	Շատ բարձր	Բարձր է	Չափավոր բարձր	Հարաբերական ցածր

Ըստ ուսումնասիրությունների՝ հաջողության հասնելու կարևոր նախապայմանը տուրարտադրանքի յուրահատկության ու որակի համադրումն

է: Մրցակցային շուկայում պահանջարկ է վայելում այն տուրարտադրանքը, որն ունի բարձր որակ, համապատասխանում է սպառողների պահանջներին և ճաշակին:

Բուժավերականգնողական զբոսաշրջությունն ամբողջ աշխարհում համարվում է բարձր գնային հանգստի և ժամանցի անցկացման ձև, սակայն հայրենական շուկան կոտրում է այդ կարծրատիպերը և սպառողներին է առաջարկում մատչելի տարբերակներ:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում առաջարկվող առողջարանային հանգստավայրերի մեծ մասը չի համապատասխանում միջազգային չափորոշիչներին: Առաջարկվող ծառայությունների բարելավումը պայմանավորված է ներդրումային և մարքեթինգային ճիշտ քաղաքականությամբ: Եթե առաջարկվող ծառայությունները չեն համապատասխանում շուկայի պահանջարկին, ապա ո՛չ զեղչերը, ո՛չ էլ գովազդը չեն կարող նպաստել հայրենական բուժավերկանգնողական զբոսաշրջային շուկայի վարկանիշի բարձրացմանը [7] :

Զբոսաշրջային շուկայում հաջողության հասնելու միակ ճանապարհը նորարարությունն է՝ սպառողական պահանջմունքների բարձրացմանը և մրցակցային պայքարի սրմանը զուգընթաց նոր առաջարկներով հանդես գալը:

Մեծ է նաև գովազդի դերը, քանի որ այն ստեղծում է արտադրողի և սպառողի միջև կապ, տեղեկատվություն է հաղորդում արդեն գոյություն ունեցող արտադրանքի մասին: Բուժավերականգնողական զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ են համակարգված միջոցառումներ՝ բնությունը էկոլոգիապես մաքուր պահպանելու և վերականգնելու համար ՝ այն պաշտպանելով մարդածին գործոնների վնասակար հետևանքներից:

Հայաստանում բուժավերականգնողական զբոսաշրջության խթանումը կնպաստի զբոսաշրջային բազմարկիչի աճին, ՀՆԱ-ում տվյալ ոլորտի մասնաբաժնի մեծացմանը, զբոսաշրջիկների թվի ավելացմանը, կուրորտային գոտիներում բնակչության զբաղվածության աճին:

Պետք է հաշվի առնել, որ առողջարանային համակարգի զարգացմանը կարող է նպաստել զբոսաշրջության զարգացումը և այդ ոլորտներում Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական քաղաքականությունը: Պետություն- մասնավոր հատված- Սփյուռք համագործակցության շնորհիվ զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին Հայաստանում արձանագրվել է թե՛ քանակական, թե՛ որակական աճ:

Այսպիսով՝ բուժավերականգնողական տուրարտանդրանքի գրագետ զարգացման և իրացման արդյունքում հնարավոր է Հայաստանի Հանրապետությունը դարձնել համաշխարհային նշանակության, իր ուրույն կոլորիտով և առաջարկներով հարուստ երկիր, որը նոր մակարդակի կբարձրացնի հայրենական զբոսաշրջային շուկան, կստեղծի նոր

աշխատատեղեր և կդառնա տնտեսության խոշոր և եկամտաբեր ճյուղ: Անհրաժեշտ ներդրումների և առողջարանային գոտիների վերականգնման դեպքում Հայաստանը կդառնա աշխարհի ամենահաճախելի առողջարանային և բժշկական զբոսաշրջավայրերից մեկը:

Գրականություն

1. **Թովմասյան Գ.**, «Առողջարանային վերականգնողական զբոսաշրջության կառավարման համակարգը և զարգացման հայեցակարգային հիմքերը ՀՀ-ում», Երևան 2013, «ՀՊՏՀ-ի Բանբեր», էջ 91-92:
2. **Александрова А.Ю.**, Международный туризм, М., Кнорус, 2016, 460 с.
3. **Ефименко Н.В., Глухов А.Н.,** Лечебно-оздоровительный туризм в России и за рубежом с позиций курортной науки // Курортная медицина, 2012, № 3, с. 51-56.
4. **Карпова Ю.И., Ходыкина А.Ф.**, «Подходы к содержанию понятий «организованный туризм», «неорганизованный туризм» и «самодеятельный туризм»» // Курортно-рекреационный комплекс в системе регионального развития: инновационные подходы, 2016, № 1., с. 206-209.
5. **Котлер Ф. и Боуэн Дж., Мейкенз Дж.,** Маркетинг. Гостеприимство. Туризм, 2002, 572с.
6. **Чуприна О.Н., Мухамедова З.Х.**, «Особенности организации лечебно-оздоровительных туров» // Молодежь. Туризм. Образование: материалы конференции, Казань: Рокета Союз, 2017, с. 240-242.

www.haycurort.info.am

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը: